

## **ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ**

30.12.2015



Սիրելի՛ հայրենակիցներ,  
Ավարտին է մոտենում 2015 թվականը, որը մեր ժողովրդի համար լի էր ինչպես  
հաղթանակներով ու ձեռքբերումներով, այնպես էլ դժվարությունների հաղթահարման  
հաստատակամությամբ:

Անցնող տարում մեր երկիրը էլ ավելի շենացավ ու հաղթանակներ արձանագրեց հայի համառ  
ու տքնաջան աշխատանքի, իր երկրին ամեն մի նյարդով կապված լինելու և հայոց հողում նոր  
ծիլեր տալու անխախտ համոզման շնորհիվ:

Թող Ամանորի շունչը մտնի ամեն հայի օջախ, որտեղ թևածում է հայրենասիրությունը, որտեղ  
գերիշխում է աշխատասեր հայի ոգեղենությունը, որտեղ մանկան ճիչը սրբազան է և որտեղ  
մեծանում են հզոր Հայաստանի վաղվա կերտողները:

Սիրելի՛ բարեկամներ

Արարատի մարզում 2015 թվականին իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր, որոնք  
նպաստեցին տարբեր ոլորտների առաջընթացին:

Վստահ եմ, որ գալիք տարում ևս մարզի ողջ ազգաբնակչության համատեղ ջանքերով  
կիրականացնենք առավել արդյունավետ ու համակողմանի նախաձեռնություններ:

Մեր երկրի ու ժողովրդի համար առաջնային համարելով խաղաղությունն ու բարեկեցությունը՝  
մաղթում եմ , որ 2016-ը լինի խաղաղության ամրապնդման, առատության, տնտեսական  
զարգացման ու երկրի հզորացման տարի:Թո՛ղ որ անցած տարում մասն բոլոր ինդիվիդները, և  
բոլորս միասին լավատեսությամբ, ամուր կամքով ու հավատով մտնենք նոր տարի: